ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2202-Ա/2 «30» Դեկտեմբերի 2022 թ.

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՄԱՅԻՆ ԽՃՈՒՂԱՎԱԶՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ա», «գ» և «ժ.1» կետերի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) 2023 թվականին անցկացվող «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի կանոնակարգը՝ համաձայն հավելված № 1-ի,

2) 2023 թվականին անցկացվող «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի մասնակցության հայտի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված № 2-ի:

ՆԱԽԱՐԱՐ՝ Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

11/29/2022

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված 1
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի սպորտի նախարարի
2022 թվականի Դեկտեմբերի 30 *-ի*
№ 2202 Ա/2 *հրամանի*

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՄԱՅԻՆ ԽՃՈՒՂԱՎԱԶՔԻ

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 2023 թվականին անցկացվող « Խճուղավազք Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի (այսուհետ՝ Խճուղավազք) նպատակն է՝

1) դպրոցականների շրջանում վազքի և առողջ ապրելակերպի մասսայականացում,

2) ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչության ապահովում.

2. Խնդիրներն են՝

1) դպրոցականների բավարար ներգրավվածությունը վազքին, սպորտային պարապմունքներին և առողջ ապրելակերպի ոչ բավարար քարոզչությունը,

2) դպրոցականների զանգվածային մարզական միջոցառումներին հետագա մասնակցության ապահովումը:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Խճուղավազքի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

4. Խճուղավազքի կազմակերպումն ու անցկացումը իրականացվում է Նախարարության կողմից հաստատված հանձնաժողովի և Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիայի կողմից:

III. ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

5. Խճուղավազքը անց է կացվելու 2 փուլով՝ (1-ին փուլը՝ մարզային, 2-րդ փուլը՝ եզրափակիչ):

1) 1-ին փուլն անցկացվելու է մինչև 2023 թվականի մայիսի 1-ին տասնօրյակում՝ Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում,

2) 2-րդ՝ եզրափակիչ փուլի Խճուղավազքը անցկացվելու է Դիլիջանի «Պարզ լիճ» տանող ճանապարհին (ՀՀ Տավուշի մարզ)՝ 4 կմ հատվածում՝ 2023 թվականի մայիսի 19-ից 20-ը, (անցկաղցման համար նախատեսված է 2 օր):

6. Թիմերը պետք է մրցավայր ներկայանան 1-օր առաջ, 2023 թվականի մայիսի 19-ին, միջև ժամը 16:00-ը, անձը հաստատող փաստաթղթերով: Երեկոյան տեղի կունենա մարզամշակույթային միջոցառումներ:

7. Մեկնարկը՝ 2023 թվականի մայիսի 20-ին «Դարման» հանգստյան գոտու տարածքից՝ ժամը 13:00-ից. մասնակիցները պետք է մրցավայր ներկայանան մրցումներից մեկ ժամ առաջ:

IV. ԽՃՈՒՂԱՎԱԶՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Խճուղավազքի 1-ին փուլին կարող են մասնակցել հանրապետության բոլոր դպրոցների թիմերը, ինչպես նաև Արցախի Հանրապետության դպրոցական թիմը: 2-րդ եզրափակիչ հանրապետական փուլին կարող են մասնակցել ՀՀ մարզային, Երևանի քաղաքային և Արցախի Հանրապետության լավագույն դպրոցները (ընդամենը 12 թիմ), յուրաքանչյուր թիմի կազմում՝ 5 տղա, 2 աղջիկ (7 աշակերտ) 1 ֆիզկուլտուրայի ուսուցիչ և 1 ներկայացուցիչ:

9. Խճուղավազքի անցկացման կարգն ու պայմանները որոշում է Նախարարության կողմից ստեղծված մրցավարական հանձնաժողովը:

V. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

10. Խճուղավազքի 1-ին փուլին 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրաված դպրոցների թիմերը պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, իսկ 2-րդ փուլին 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրաված դպրոցների թիմերը և մասնակիցները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով և դրամական պարգևներով՝ 1-ին տեղ գրաված դպրոցը պարգևատրվում է՝ 4,000,000 ՀՀ դրամով, 2-րդ տեղը՝ 2,500,000 ՀՀ դրամով և 3-րդ տեղը՝ 1,500,000 ՀՀ դրամով, պարգևատրվում են նաև դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչները՝ 1-ին տեղ՝ 700,000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 500,000 ՀՀ դրամ և 3-րդ տեղ 300,000 ՀՀ դրամ: Խճուղավազքի հաղթող թիմերի աշակերտները կպարգևատրվ են դրամական մրցանակներով 1-ին տեղ՝ 7 մասնակից 150,000-ական ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 7 մասնակից 100,000-ական ՀՀ դրամ, 3-րդ տեղ՝ 7 մասնակից 75,000-ական դրամ, հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները ներառված չեն:

11. Խճուղավազքի բոլոր մասնակիցներին տրվում են մարզաշապիկներ, համարներ և հավաստագրեր:

12. Արդյունքներն ամփոփվում են մրցումների ավարտից անմիջապես հետո:

VI. ԾԱԽՍԵՐԸ

13. Խճուղավազքի 1-ին փուլի անցկացման հետ կապված ծախսերը՝ մրցավարներին սնունդ, հավաստագրեր թիմերին և 2-րդ փուլի անցկացման հետ կապված ծախսերը՝ մրցումների անցկացման համար, մրցավարներին սնունդ, մասնակիցներին

մարզահագուստ (մարզաշապիկ, գլխարկ), գավաթներ, մեդալներ, հավաստագրեր, շնորհակալագրեր, հուշանվերներ՝ պատվավոր հյուրերին, հաղորդավարի ծառայություն, տպագրական նյութեր, տարածքի ձևավորում, նկարահանման, ուղիղ եթերի ապահովում, շարժական բեմ և Լեդ էկրանի ապահովում, տրանսպորտային ծառայություն, հաղորդավարի ծառայություն, դրոշների ձեռք բերում, մասնակիցներին տեղում ընդմիջման ժամանակ՝ սնունդ, հրավառություն, գրենական պիտույքներ՝ ծախսերը կատարվում է ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին, մասնակիցների գործուղման ծախսերը (ճանապարհածախս, գիշերակաց և սնունդ) հոգում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

VII. ՀԱՅՏԵՐԸ

14. Խճուղավազքին մասնակցության համար 1-ին փուլի հայտերը ներկայացվում են ՀՀ մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի և Արցախի Հանրապետության սպորտի համապատասխան վարչություններ, իսկ 2-րդ փուլի մասնակցության հայտ՝ համաձայն հավելված 2-ի, անձնագրի կամ նույնականացման վկայականի, ինչպես նաև տեղեկանք դպրոցի տնօրենի կողմից հաստատված փաստաթղթերը ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի քաղաքականության վարչություն մինչև 2023 թվականի մայիսի 13-ը ներառյալ: Հարցերի դեպքում զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ (010) 59-96-33, (010) 59-96-32 զանգահարել երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-18:00»:

Հավելված № 2
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի դեկտեմբերի 30-ի
№ 2202 -Ա/2 հրամանի

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՄԱՅԻՆ ԽՃՈՒՂԱՎԱԶՔԻ ՀԱՅՏԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ----------

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվը	Անձնագիր (սերիա, համար)	Դպրոցը, դասարանը	Բնակության վայրը, հասցեն	Բժշկի
1.						
2.						
3.						

Հանրակրթական դպրոցի տնօրեն՝ ----------/----------/

Ֆիզկուլտուրայի ուսուցիչ՝ ----------/----------/

Բժիշկ՝ ----------/----------/